

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության փորձագետ Ռուզաննա Կոլյայի Կարապետյանի կողմից 2022թ. մայիսի 19-ից մինչև օգոստոսի 19-ն կատարված աշխատանքների վերաբերյալ

Ես՝ Ռուզաննա Կոլյայի Կարապետյանս, 2022թ. մայիսի 19-ից մինչև օգոստոսի 19-ն
աշխատելով որպես ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման
գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

- քաղաքացիների ընդունելության, դիմումների ընդունման, ուսումնասիրության, փաստաթղթերի տրամադրման գործընթացի կազմակերպում,
- քաղաքացիական կացության ակտերի գրանցման և դրանից բխող այլ գործառույթների իրականացման համար դիմումների լրացում, կից ներկայացվող փաստաթղթերի ընդունում, դրանց մուտքագրում էլեկտրոնային կառավարման համակարգ և գործակալության կողմից դիմումների քննարկման արդյունքում ձևավորված փաստաթղթի տրամադրում,
- կրկնօրինակ վկայականների և տեղեկանքների տրամադրում,
- քաղաքացիների հնչեցրած հարցերի, նրանց իրավունքների և պարտականությունների, օրենքով սահմանված դրույթների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- Միջազգային փոխօգնության մասին հարցումների կազմում և հասցեագրում ԱՊՀ երկրների իրավասու մարմիններին, ինչպես նաև վերջիններից ստացված հարցումների ուսումնասիրություն, քննարկում, կատարման համար համապատասխան ընթացքի ապահովում:

Հարգանքով՝



Ռուզաննա Կարապետյան
19.08.2022թ.